

**Տ. ԶԱՎԵՆ ԱԲԵՂԱ ՅԱԶԻՉՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(27 նոյեմբերի 2005 թ.)

*«...զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրուք իցեն
կեանք նորա»:*

*«...որովհետև մարդու կյանքն իր կուրա-
կած հարստության մեջ չէ»:*

(Ղուկաս ԺԲ 15)

«Յանուն Նոր եւ Որդոյ եւ Նոգոյն Սրբոյ. ամէն»:

Մարդկային պապմության մեջ հասարակությունը միշտ էլ բաժանվել է սոցիալական փառքեր և անհավասար խավերի: Մեկը շատ է վաստակում, մյուսը՝ ավելի քիչ, մեկն աչքը բացում է ծայրահեղ աղքատության և չքավորության, մյուսը՝ ժառանգություն ստացած ահռելի կարողության մեջ, և այսպիսով ակամայից առաջ է գալիս անհավասարությունը: Նասարակությունը բաժանվում է ունևորների և չքավորների:

Միևեկի հավաքացյալներ, ավերարանական այսօրվա ընթերցումը անմիտ մեծահարուստի պապմությունն է, մեծահարուստ, ով փորձում է իր ծրագրերն իրականացնել, ընդլայնել իր շքեմարանները, հները քանդելով նորերը՝ մեծամեծերը կառուցել, բազում փարիների պաշար հավաքել և անհոգ ապրել, սակայն այս ամենի մեջ նա անտեսել և թերևս մոռացել էր մեծահարուստներից մեծահարուստի, թագավորների թագավորի՝ այդ ամենը իրականության կոչող Ամենակարող Տիրոջ գոյության մասին: Նրա գործերում բացակայում էր Աստուծո կամքը: Այս մեծահարուստը չէր էլ պարկերացնում և նույնիսկ չէր էլ անդրադառնում, որ այդ ամենն իր մարմնի պահպանման համար է, բայց հոգիների Տերը վաղը ևեթ պիտի առնի իր հոգին:

Դրամատերն իր ձեռքին ունի բանալի, որով կարողանում է բացել երկրային վայելքների գրեթե բոլոր դռները, որոնցից, անշուշտ, աղքատը չի կարող օգտվել: Դրամով կառուցվում են հիվանդանոցներ, դպրոցներ և հանրօգուտ այլ հասարակություններ: Բայց և դրամի համար է, որ շատերը թողնում են հայրենի փունը, հարազատներին և բռնում պանդխտության ճանապարհը: Դրամը վրանգավոր և կործանարար է դառնում այնժամ, երբ մեր՝ մարդկանցս կողմից դառնում է ավելի պաշտելի, քան հարազատ օջախը, ընտանիքը, հայրենիքը, ավելի երկրպագելի, քան անգամ Եկեղեցին ու Աստված:

«Ի՞նչ է դրամը» հարցին իմաստունը պատասխանում է. «Դրամն այն ուժն է, որով կարող ես մարդուն ամեն ինչ փալ, բացի երջանկությունից, և կարող ես մարդուն փանել ամեն փեղ, բացի Երկնքի արքայությունից»: Արդարև, դրամով կարող ես շքեղաշուք պալատներ կառուցել, սակայն անկարող ես դրամով այնպեղ բնակեցնել Աստուծո ներկայությունը, խաղաղությունը: Դրամով կարող ես վարձել աշխարհի ամենալավ բժիշկներին, սակայն չես կարող գնել առողջություն և հավիտենական կյանք: Օրվա ավերարանական ընթերցվածի

հերոսի միջոցով Քրիստոս մեզ մի օրինակ է փալիս և պարվիրում, որ հոգին առավել է, քան մարմինը, և մարմինն առավել, քան հագուստը: Եթե մենք հեղանուր լինենք այս խոսքերին, ապա Տիրոջ խոսքի համաձայն ամեն բան մեզ ավելիով կարվի:

Արժաթասեր մարդը գլխավորաբար մտածում է շահի և դրամի մասին: Նա այլևս չի լսում իր խղճի ձայնը և պարբասար է ամեն փեսակի չարությունների, որովհետև, ինչպես ասում է առաքյալը, ամեն չարության արմարն արժաթսիրությունն է (Ա Տիմ. 2 10): Եթե կույրը կորցնում է մարմնական փեսողությունը և միայն շոշափելով ու նշմարելով է զգում շրջապատը, ապա ընչաքաղց մարդը կորցնում է իր հոգու փեսողությունը, նա իր սիրտը փոխում է այդ փայլուն մեփաղի կարծրության հետ:

Միջնադարյան առակը պարմում է, որ մի իմաստուն՝ մեծահարուստի մոտ գնալով, նրանից դրամ է խնդրում: Նարուստն ինքնավստահ և հպարտ կեցվածքով փորձում է ամաչեցնել իմաստունին և հարցնում է, թե ինչո՞ւ միշտ իմաստունն է ինչ-որ բան խնդրում հարուստից և թերևս երբեք հակառակը չի եղել, որովհետև, պարասխանում է վերջինս, իմաստունը գիտի դրամի օգտակարությունը, մինչդեռ հարուստը չգիտի իմաստության օգտակարության մասին:

Միբելիներ, հարուստ լինելը բնավ վատ բան չէ, եթե, իհարկե, գնահատել գիտես և կարողանում ես աստվածահաճո կերպով փնօրինել հարստությունը, կամ ամեն հարուստ չէ, որ չգիտի իմաստության արժեքը: Շատեր շարժվում են առաքյալի խոսքի համաձայն՝ կարողյալների պակասությունը լցնում իրենց առատությամբ (Ա Կորնթ. Ը 14):

Չբավորությունը, աղքատությունը վատ բաներ են, անշուշտ, բայց ավելի վատ է, երբ մարդ, հարուստ լինելով, զրկում է կարողյալներին, անբարբեր է ազգի կարիքների նկատմամբ: Ազահ մարդու սրտում հնարավոր չէ գտնել ո՛չ հավատ, ո՛չ սեր Աստծո հանդեպ և ո՛չ էլ վստահություն հավիտենական անանց արժեքների հանդեպ: Նրա համար գոյություն ունի միայն ԵՍը, մարմին և նյութ, վայելք և շահ, ո՛չ հարազատ, ո՛չ բարեկամ, ո՛չ Եկեղեցի: Սակայն որքան երջանիկ պիտի լինի այն մարդը, որ եթե ոչ ինքը, բայց գոնե իր ժառանգները ականապես են նրա ողորմությանը, բարեգործության արդյունքներին, լինի դա եկեղեցի, ծերանոց կամ հիվանդանոց: Որովհետև բարեգործությունը, ողորմությունն իրենց մեծ և փոքր բովանդակության մեջ ազնվական արարքներ են, որ հաճույք են պարճառում թե՛ բաշխողին և թե՛ սրացողին: Երկուսն էլ գոհունակ հոգով են լցվում. բաշխողը, սրացողի երջանկությունը փեսնելով, ուրախությամբ է համակվում, իսկ սրացողն էլ երախտագիտության մեծ զգացումով է պարուրվում ազնվական սիրտ ունեցող բարերարի նկատմամբ:

Ողորմությունը գործնական աղոթք է, այն մասնավոր ժամանակ կամ սահման չունի, ուստի բարիք գործեք ամենայն ժամ (հմմտ. Գաղ. 2 10):

Այս աշխարհի նյութական ճոխությունները, վայելքները, ժամանակավոր հաճույքները չէ, որ արժեք պիտի փան մեր կյանքին: Այդ բոլորի բուն նպատակը մեր մարմնի սնուցումն է: Մենք՝ քրիստոնյաներս, գիտենք ու հավատում ենք, որ կյանքի իրական արժեքը մեր բարոյական բնությունը անաղարտ պահելու մեջ է և մեր հոգու ազնվացումն է, «...որովհետև մարդու կյանքն իր կուրակած նյութական հարստության մեջ չէ»:

Մեկընդմիջար հիշենք. Նա, ով հարուստ էր և մեզ համար աղքատացավ, մենք Նրանով հարստանանք: Թոթափենք կարծրությունը մեր սրտից և համաձայն Ավեփարանական պարվիրաններին ընթանանք այն ճանապարհով, որը մեզ կառաջնորդի դեպ հավիտենականություն՝ միանալու արդարների ու սուրբերի դասին: Ամեն: